ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

<<05.05.2025թ>>

բնակավայր Ծովագյուղ

Սույն թվականի մայիսի 05-ին, ժամը 11.00-ին ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք Ծովագյուղ բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ 12-րդ, 13-րդ հոդվածների, 16-րդ հոդվածի 4-րդ մասի 6-րդ կետի և ՀՀ կառավարության 2015թ նոյեմբերի 19-ի <<Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին>> N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (առաջին փուլ) ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ 24 հասցեում նախատեսվող նոր հանգստի գոտու կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ:

Ելույթ ունեցան՝

Մ. Մկրտչյան

Ներկայացրեց, որ սույն թվականի մայիսի 05-ին, ժամը 11.00-ին ն ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք Ծովագյուղ բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի է ունենում ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ 24 հասցեում նախատեսվող հանգստի գոտու կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ:

Ա. Ներսեսյան

Ներկայացրեց նախատեսվող գործունեությունը և աշխատանքային նախագիծը: Նշեց նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները, տեխնոլոգիական և տեխնիկական լուծումները:

Ա. Գալոյան

Ներկայացրեց Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Նշեց, որ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է համապատասխան Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին օրենքի պահանջների համաձայն:

Ներկայացրեց նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա՝ մասնավորապես փոշու, ածխածնի օքսիդի և ազոտի երկօքսիդի առաջացման աղբյուրները և այդ ազդեցությունները մեղմացնող միջոցառումները:

Հանրային քննարկումների ընթացքում տեղի ունեցավ նաև մտթերի փոխանակում, բարձրացվեցին հարցեր, որոնց վերաբերյալ կողմերը տվեցին սպառիչ պատասխաններ:

Ծովագյուղ բնակավայրի ղեկավար՝ Ա. Սիմոնյան

«Ն.Ա. Պրոդակշն» ՍՊԸ տնօրեն՝ Ա. Ներսեսյան